ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմը (այսուհետ՝ Աշխատակազմ) հայտարարում է Աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության փորձագետ ներգրավելու համար

Փորձագետը ներգրավվում է ՀՀ օրենսդրական ակտերի փոփոխությունների և ՀՀ օրենսդրական ակտերի կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների ներկայացման, ՀՀ Շիրակի մարզում իրականացվող շինարարական աշխատանքների, սուբվենցիայի ծրագրերի և այլ շինարարական ծրագրերի հետ կապված գործառույթներ իրականացնելու նպատակով:

Աշխատանքային պարտականություններն են՝

ա. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի (այսուհետ՝ Մարզ) տարածքում պետական միջոցներով Աշխատակազմի պատվիրատվությամբ իրականացվող կապիտալ շինարարության օբյեկտների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման, կապալառու կազմակերպությունների ընտրության, շինարարության որակի տեխնիկական և հեղինակային հսկողությունների խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման աշխատանքների իրականացում,
բ. Մարզում սուբվենցիոն ծրագրերի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի ուսումնասիրության և համապատասխան եզրակացությունների տրամադրման աշխատանքների իրականացում,
գ. քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման տարածքներում համայնքների ղեկավարների կողմից ներկայացված էսքիզային նախագծերի ուսումնասիրության և համապատասխան մարմինների հետ համաձայնեցման աշխատանքների իրականացում,
դ. իրավական ակտերի վերաբերյալ եզրակացությունների նախագծերի ներկայացում:

Փորձագետին ներկայացվող պահանջներն են.

ՀՀ քաղաքացիություն, «Ճարտապետություն և շինարարություն» մասնագիտությունների ոլորտի բարձրագույն կրթություն, հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ քաղաքաշինության կամ արդյունաբերության կամ ճարտարագիտության բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ, համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, ինչպես նաև իրավական ակտերի մշակման փորձառություն:

Փորձագետը ներգրավվում է 3 /երեք/ ամիս ժամկետով՝ 2026 թվականի հունիսի 18-ից մինչև սեպտեմբերի 18-ը:

Աշխատավարձը 267072 /երկու հարյուր վաթսունյոթ հազար յոթանասուներկու/ ՀՀ դրամ:

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

* դիմում ՀՀ Շիրակի մարզպետարանի գլխավոր քարտուղարի անունով.

* տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի(ների), վկայական(ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք/ներ համապատասխան մարմնից/ներից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին,
* արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից կցագրման վկայականի պատճենները՝ բնօրինակների հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
* մեկ գունավոր լուսանկար 3X4 սմ չափսի,
* անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը
* հայտարարություն՝ նշված սահմանափակումների բացակայության մասին.
- պաշտոնից ազատվել կամ ծառայությունը վերջին մեկ տարվա ընթացքում դադարեցվել է կարգապահական տույժ կիառելու,
- օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու,
- օրենքի խախտմամբ պաշտոնի նշանակվելու,
- «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու,
- Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու, ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի դեպքերում, բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակվել է տուգանք, ինչպես նաև երկու տարի անընդմեջ իր մեղքով վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտները չստանալու դեպքում:

Ընտրությունը կատարվելու է դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրության միջոցով:

Քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ, կամ էլեկտրոնային փոստի միջոցով:

Աշխատավայրը՝ ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 2026թ. հունիսի 17-ը ներառյալ:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմ /ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16, անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչություն, հեռախոս 0312 4-90-00-136/ էլեկտրոնային փոստի հասցեն՝ shirak.andznakazm@mta.gov.am):

ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի

գլխավոր քարտուղար Արսեն Աբրահամյանին

.....-ից
դիմողի անուն հայրանուն ազգանունը

.....
դիմողի հեռախոսի համարը

.....
էլեկտրոնային հասցեն

ԴԻՄՈՒՄ

Ծանոթանալով ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի կողմից հրապարակված հայտարարությանը՝ ներկայացնում եմ որպես փորձագետ ներգրավվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները՝

1. Անձնագրի (ՀԾ համարանիշ) _____ էջ,
2. Դիպլոմի (դիպլոմների) _____ էջ,
3. Աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթի _____ էջ,
4. Զինվորական գրքույկի (առկայության դեպքում) _____ էջ:

Առդիր՝ _____ էջ:

_____
(ստորագրություն, անունը, ազգանունը)

_____
(դիմումը ներկայացնելու ամսաթիվը)

Նախազգուշացված եմ փորձագետի պաշտոնում նշանակվելու դեպքում կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար զբաղեցրած պաշտոնից ազատվելու և սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին: